

**Պ Ա Յ Մ Ա Ն Ա Չ Ի Ր  
A G R E E M E N T**

MasterCard վճարային համակարգերի դեբետային քարտերի տրամադրման և սպասարկման  
to issue and service MasterCard/VisaCard debit cards

<p>ք. Երևան “-----” ----- 2009թ.</p>	<p>Yerevan “-----” ----- 2009</p>
<p>«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն, այսուհետ՝ Բանկ, ի դեմս «Վարդանանց» մասնաճյուղի կառավարիչ՝ Վահե Հարությունյանի, որը գործում է լիազորագրի հիման վրա, մի կողմից, և քաղաքացի՝ <u>(անձնագիր՝ -----)</u>, /այսուհետ՝ Քարտապան/ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.</p>	<p>“ARMBUSINESSBANK” CJSC, hereinafter referred to as the Bank, on behalf of Vahe Harutunyan, the manager of “Vardanants” branch, acting under license on the one side, and the citizen <u>(Pasport: -----)</u> /hereinafter referred to as Cardholder/ on the other side entered to the present Agreement on the following:</p>
<p align="center"><b>1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՐԿԱՆ SUBJECT OF THE AGREEMENT</b></p>	
<p>1.1. Սույն պայմանագիրը կարգավորում է Բանկի կողմից տրամադրվող ԱրՔա, MasterCard և Maestro վճարային համակարգերի քարտերի տրամադրման և սպասարկման հետ կապված Բանկի և Քարտապանի փոխհարաբերությունները:</p>	<p>1.1. The present agreement regulates the relationship between the Bank and Cardholder in order to provide and service ArCa, MasterCard and Maestro cards to be issued by the Bank.</p>
<p align="center"><b>2. ԿՈՂՄԵՐԻ ՊՐԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ RIGHTS AND OBLIGATIONS OF THE PARTIES</b></p>	
<p><b>2.1. Բանկը պարտավորվում է.</b> 2.1.1. Սույն պայմանագրում սահմանված կարգով և ժամկետներում Քարտապանին տրամադրել դեբետային քարտ հաճախորդի հայեցողությամբ՝ համապատասխան արժուքային հաշվով, 2.1.2. Ապահովել քարտերի պատշաճ սպասարկում ԱրՔա և MasterCard International վճարային համակարգերում գործող բանկոմատներում, կանխիկացման և սպասարկման կետերում (քարտային ծրագրի համապատասխան ծառայության շրջանակներում), 2.1.3. Պահպանել Քարտապանի քարտային հաշվի, ինչպես նաև այդ հաշվից կատարված գործառնությունների գաղտնիությունը, համաձայն Բանկային գաղտնիքի մասին օրենքի, 2.1.4. Քարտապանի քարտային հաշիվների դրական մնացորդին հաշվարկել տոկոսներ՝ համաձայն Բանկում գործող սակագների և տրամադրել Քարտապանին հաշվի քաղվածքներ, 2.1.5. Քաղվածքի տվյալները ենթակա են բողոքարկման քաղվածքի տրամադրման օրվան հաջորդող 15 օրվա ընթացքում: Քարտապանի կողմից նշված ժամանակահատվածում բողոքարկում չներկայացնելու դեպքում գործարքները համարվում են հաստատված, 2.1.6. Քարտապանի պահանջով տրամադրել քարտային հաշվից լրացուցիչ քաղվածք.</p>	<p><b>2.1. The Bank shall undertake to:</b> 2.1.1. Provide the Cardholder with debit cards in the respective currency at the discretion thereof in accordance with the established order and terms. 2.1.2. Provide due and proper card servicing at ATMs and service outlets of ArCa and MasterCard International payment systems (in the context of the relevant card project services). 2.1.3. Maintain professional secrecy with respect to either the details of a card account or any transaction channelled or processed through it in compliance with the act on the Bank Secrecy. 2.1.4. Accrue interests against the Cardholder’s favourable card account balance subject to the fee schedule applicable then in the Bank and furnish statements of account to the Cardholder. 2.1.5. An appeal may be made and filed with regard to the details stated in the statement within the period of 15 days following the provision thereof. In the event no such appeal is filed within the indicated period, the transactions shall be deemed as accepted. 2.1.6. Furnish at the Cardholder’s request additional card account statements, pursuant to the fee schedule as</p>

<p>համաձայն տվյալ պահին Բանկում գործող սակագների,</p> <p>2.1.7. Արտերկրում քարտի առգրավման դեպքում քարտը քարտապանին է վերադարձվում MasterCard International վճարային համակարգի կանոններով սահմանված ժամկետներում՝ ծախսերի փոխհատուցման պայմանով:</p> <p>2.1.8. Բանկը պարտավորվում է սպասարկել թողարկված բոլոր քարտերը դրանց գործողության ժամկետում, եթե, միայն Վճարային համակարգի կողմից չի հրապարակվում որևէ օրենք կամ պահանջ՝ քարտերի գործնելիությունը դադարեցնելու վերաբերյալ:</p> <p>2.1.9. Սույն պայմանագրի 2.1.8. կետում նշված օրենքի կամ պահանջի կիրարկման դեպքում, բոլոր Քարտատերերի միջոցները և տարեկան սպասարկման վճարների մնացորդները փոխանցվում են Քարտապանների գրավոր միջնորդագրում նշված այլ բանկային հաշվի վրա:</p> <p>2.1.10. Քարտապանները քարտային հաշիվները կարող են համալրել ինչպես կանխիկ, այնպես էլ փոխանցումով: Մուտքագրված միջոցները հասանելի են դառնում քարտապանին հաջորդ բանկային օրվա 17:00-ին (Երևանի ժամանակով):</p> <p>2.1.11. Բանկը իր բոլոր հաճախորդներին պետք է ընձեռի իրենց քարտային հաշիվները ինտերնետի միջոցով անգլերեն լեզվով առցանց դիտելու հնարավորություն:</p>	<p>applicable then in the Bank.</p> <p>2.1.7. In the event of the card forfeiture, seizure or confiscation in a foreign country, the card shall be returned to the Cardholder within the time-limit specified by the requirements of the MasterCard International payment system, subject to refund of charges.</p> <p>2.1.8. The bank undertakes to support, maintain and service all Issued Cards during the validity thereof, unless any prescription law, regulation or requirement has been issued by the Payments system with reference to and resulting in halting or the suspension of the cards.</p> <p>2.1.9. In case of any changes in Laws &amp; Regulations out of Bank control all Cardholders' deposits and rest of annual service fee must be transferred to another bank account which shall be mentioned in the Cardholders' written petition.</p> <p>2.1.10. Reinforcement of Card Accounts by Cardholders may be effected either by cash transaction or by remittance order. The value dated funds shall become available to the Cardholder at 17:00 (by Yerevan time) of the following day.</p> <p>2.1.11. The Bank provides English software for all customers to check their card accounts online through the Internet.</p>
<p><b>2.2. Բանկն իրավունք ունի.</b></p>	<p><b>2.2. The Bank shall be entitled to:</b></p>
<p>2.2.1. Քարտապանի հաշվից անվիճելի կարգով գանձել քարտի տարեկան սպասարկման վարձավճարը և սպասարկման համար միջնորդավճարներ համաձայն Բանկում գործող սակագների,</p> <p>2.2.2. Փոփոխել քարտերի տրամադրման և սպասարկման պայմանները և սակագները՝ առնվազն 15 օր առաջ պատշաճ կերպով տեղյակ պահելով Քարտապանին փոփոխությունների մասին,</p> <p>2.2.3. Սույն պայմանագրի պայմանների խախտման դեպքում լուծել պայմանագիրը 20 բանկային օր առաջ այդ մասին տեղեկացնելով Քարտապանին:</p>	<p>2.2.1. Charge apparently or without dispute the annual service fee and commission charges from the Cardholder's account, pursuant to the fee schedule as applicable then in the Bank.</p> <p>2.2.2. Make amendments to or modifications in the terms and conditions and the tariffs for cards provision and servicing, having given at least 15 days' due notice of such to the Cardholder.</p> <p>2.2.3. Dissolve or annul this service agreement by giving the Cardholder 20 days' prior notice thereof in case any of the terms and conditions therein is violated.</p>
<p><b>2.3. Քարտապանն իրավունք ունի.</b></p>	<p><b>2.3. The Cardholder shall be entitled to:</b></p>
<p>2.3.1. Քարտային հաշվին միջոցներ մուտքագրել ինչպես անձամբ, այնպես էլ իր հանձնարարությամբ՝ երրորդ անձի միջոցով, անկանխիկ կամ կանխիկ, Բանկում կամ Բանկի ցանկացած մասնաճյուղում: Միջոցների մուտքագրումը կարող է կատարվել նաև այլ բանկերի միջոցով,</p>	<p>2.3.1. Credit funds for cash or non-cash transaction either personally, or by virtue of a third party at the instructions thereof to the card account, at the Bank or any of the branch-offices thereof. Funds entry may as well be effected and processed through other banks.</p> <p>2.3.2. Require to provide, should the transaction be</p>

<p>2.3.2. Գործարքի մերժման դեպքում պահանջել մերժման պատճառը,</p> <p>2.3.3. Բողոքարկել գործարքը՝ ներկայացնելով դրա համար անհրաժեշտ հիմքեր (անդորրագրեր, չեկեր, հաշվից քաղվածքներ և այլն) 2.1.5 կետում սահմանված ժամկետում,</p> <p>2.3.4. Բանկից պահանջել և ստանալ լրացուցիչ քաղվածք՝ Բանկում գործող սակագների համաձայն,</p> <p>2.3.5. Ցանկացած ժամանակ լուծել պայմանագիրը 20 քանկային օր առաջ այդ մասին տեղեկացնելով Բանկին:</p> <p>2.3.6. Քարտերի սպասարկումը իրականացվում է համաձայն սույն պայմանագրի անքակտելի մաս հանդիսացող <u>Հավելված 3-ում</u> սահմանված սակագների:</p> <p>2.3.7. Սույն պայմանագրի հետ կապված վեճերը և տարաձայնությունները լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:</p>	<p>refused, rejected or dismissed, reasons for such a denial.</p> <p>2.3.3. Take an appeal against the transaction by submitting any necessary grounds thereto (vouchers, cheques, statements of accounts, etc.) within the period as specified under item 2.1.5 herein.</p> <p>2.3.4. Require and receive an additional statement in accordance with the tariff schedule as applicable then in the Bank.</p> <p>2.3.5. Terminate this service agreement at any time by giving 20 banking day notice to the Bank.</p> <p>2.3.6. The servicing of Cards is carried out as per the Tariff schedule as established in <u>Appendix 3</u> constituting the integral part of this Agreement</p> <p>2.3.7. Disputes and discords related to this Agreement shall be settled in accordance with the procedure established by the legislation of the Republic of Armenia</p>
<p><b>2.4. Քարտապանը պարտավոր է.</b></p>	<p><b>2.4. The Cardholder shall be liable to:</b></p>
<p>2.4.1. Բանկին տրամադրել ճշգրիտ տեղեկություններ և դրանց ցանկացած փոփոխության մասին անհապաղ տեղեկացնել Բանկ,</p> <p>2.4.2. Քարտը ստանալու պահին վճարել քարտի տրամադրման և սպասարկման մեկ տարվա վարձավճարը, ինչպես նաև քարտային հաշվի նվազագույն մնացորդը, համաձայն Բանկում գործող սակագների,</p> <p>2.4.3. Ժամանակին կատարել միջնորդավճարների, և վերոհիշյալ գումարների ուշացման և/կամ չմարման դիմաց հաշվարկված տոկոսների և տույժերի վճարումները, համաձայն Բանկում գործող սակագների,</p> <p>2.4.4. Կցված քարտի պատվիրման ժամանակ մինչև քարտի տրամադրումը կատարել չնվազող մնացորդի համարում համաձայն տվյալ պահին Բանկում գործող սակագների,</p> <p>2.4.5. Քարտը և/կամ PIN կոդը, ինչպես նաև քարտային տվյալները չտրամադրել այլ անձանց, տրամադրելու դեպքում պատասխանատվություն կրել իր քարտով կատարված գործառնությունների համար,</p> <p>2.4.6. Քարտի կորստի դեպքում այդ մասին անմիջապես հայտնել պրոցեսինգային կենտրոն (+ 37410) 440380 հեռախոսահամարով (շուրջօրյա) կամ Բանկ քարտի վրա նշված հեռախոսահամարներով, հայտնելով իր նշանաբանը համապատասխան քաժնի աշխատակցին: Տեղեկացման պահից դադարեցվում է քարտի գործողությունը: Քարտի գործողությունը վերականգնելու համար Քարտապանը պետք է Բանկ ներկայացնի գրավոր դիմում այդ մասին կամ ֆաքսի միջոցով ուղարկի</p>	<p>2.4.1. Report and communicate accurate details to the Bank and inform immediately and without delay of any changes therein.</p> <p>2.4.2. Effect payment for a year of any fee chargeable for Card's issue and servicing upon receipt thereof, as well as the maintenance margin requirement in accordance with the tariff fees, applicable then in the Bank.</p> <p>2.4.3. Effect timely and in due time payment of commissions, and of any interests charged and penalties imposed on for either delay in payment and/or non-payment of the above indicated amounts in accordance with the tariff fees, applicable then in the Bank.</p> <p>2.4.4. In the event of making an additional card order, effect prior to issuance thereof a reinforcement of the minimum margin requirement in accordance with tariff fees, applicable then in the Bank.</p> <p>2.4.5. Provide neither the card nor the PIN code, nor supply any card details to a third party; where such occurs, the Cardholder shall assume and be held responsible and liable for any transaction processed with and through his/her card.</p> <p>2.4.6. In the occurrence of loss event, immediately call the processing center at (+ 37410) 440380 (available round-the-clock) or at any number indicated on the Bank card and relate the password to the respective Bank officer. The card shall be terminated and cease to be in effect upon such notification. For recovery purposes, the Cardholder shall have to submit a written application to the Bank for the renewal of the card and forward it via facsimile and relate the password over the telephone to the respective Bank officer.</p>

<p>դիմումը և հեռախոսով հայտնի իր նշանաբանը համապատասխան բաժնի աշխատակցին,</p> <p>2.4.7. Ժամկետանց կամ անվավեր ճանաչված քարտը վերադարձնել Բանկ, քարտը չվերադարձնելու դեպքում Քարտապանը գրկվում է քարտի չնվազող մնացորդը տնօրինելու հնարավորությունից:</p> <p>2.4.8. Չեղծարար գործարքների հայտնաբերման դեպքում, ներկայացնել դիմում՝ մանրամասն նշելով գործարքի ամսաթիվը և հանգամանքները՝ քաղվածքը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ քան 60 օր գործարքի իրականացման ամսաթվից հետո:</p> <p>2.4.9. Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու կամ այլ պատճառներով դադարեցնելու դեպքում՝ անհապաղ և պատշաճ կերպով տեղյակ պահել Բանկին այդ մասին՝ Քարտի գործողություն կամ այլ պայմանագրի ժամկետն ավարտվելու պահից առնվազն 30 օր առաջ:</p>	<p>2.4.7. Return to the Bank past-due or invalid cards; failing to do so, the Cardholder shall be deprived of the access to use and dispose of the card's maintenance margin requirement.</p> <p>2.4.8. Submit an application in case any fraudulent transactions shall be either revealed or detected specifying in detail the data and circumstances of the transaction within 30 days after the statement receipt, but no later than 60 days after the date of the transaction.</p> <p>2.4.9. Duly and without delay inform the Bank 30 days prior to the expiration of the Card validity date or another contract, in the event of an early cancellation of the contract or suspension thereof for other reasons.</p>
---	---

**3. ՔԱՐՏԱՊԱՆԻ ԵՎ ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՐՏԻ ԿՈՐՄՏԻ ՂԵՊՔՈՒՄ  
ACTIONS OF THE CARDHOLDER AND THE BANK IN THE EVENT OF LOSS**

<p>3.1. Բանկը պատասխանատվություն չի կրում այն վնասի համար, որը կարող է կրել Քարտապանը քարտը կորցնելու պահից մինչև Բանկ հայտնելն ընկած ժամանակահատվածում:</p> <p>3.2. Նոր քարտը և PIN կոդը Բանկը Քարտապանին տրամադրում է՝ վերջինիս կողմից նոր քարտի պատրաստման ծախսերը Բանկում գործող սակագների համապատասխան վճարելուց հետո:</p> <p>3.3. Քարտապանի կողմից PIN կոդը մոռանալու կամ կորցնելու դեպքում, Բանկը նրան տրամադրում է նոր քարտ և PIN կոդ՝ քարտի պատրաստման ծախսերը Բանկում գործող սակագների համապատասխան վճարելուց հետո:</p>	<p>3.1. The Bank has and will have no liability for damages which the Cardholder may be incurring for the time when the card was lost until reporting thereof to the Bank.</p> <p>3.1. The Bank shall furnish the new card and the PIN code to the Cardholder subsequent to payment by the latter in conformity with the fee schedule applicable then in the Bank of any derivative charges and expenses related to card-making.</p> <p>3.2. In the event that the Cardholder forgets or loses the PIN code, the Bank shall furnish a new card along with the PIN code subsequent to payment by the Cardholder in conformity with the fee schedule applicable then in the Bank of any derivative charges and expenses related to card-making.</p> <p>3.3.</p>
---	---

**4. ՔԱՐՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՀԱՇՎԻ ՓԱԿՈՒՄԸ  
CARD VALIDITY AND ACCOUNT CLOSING**

<p>4.1. Վճարային քարտը հանդիսանում է Բանկի սեփականությունը:</p> <p>4.2. Քարտը գործում է մինչև քարտի վրա նշված ամսվա վերջին օրը: Գործողության ժամկետը լրանալուց հետո կամ սույն պայմանագրի լուծման դեպքում քարտը բլոկավորվում է և համակարգի սպասարկման կետերի կողմից ընդունման ենթակա չէ:</p> <p>4.3. Քարտի և սույն պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու համար՝ Քարտապանը քարտի ժամկետը լրանալուց առնվազն 20 բանկային օր առաջ Բանկ է ներկայացնում գրավոր դիմում, ինչպես նաև քարտային հաշվին ապահովում է Բանկի սակագներով սահմանված քարտի վերաթողարկման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ:</p>	<p>4.1. The payment card is and shall remain the property of the Bank.</p> <p>4.2. The card shall be valid and in full effect until the last day of the month indicated on the card. Upon expiry or in the event that the present agreement is dissolved or cancelled, the card shall be blocked and deemed non-acceptable by service outlets within the system.</p> <p>4.3. To extend the validity either of a card or this agreement, the Cardholder shall have to submit to the Bank at least 20 banking days prior to expiry date a written application, as well as ensure and provide for any financial means on the card account as required and specified under the Bank's tariffs for cards reissue.</p>
---	--

**5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ  
MISCELLANEOUS**

5.1. Բանկը պատասխանատվություն չի կրում իր այն պարտավորությունների չկատարման համար, որոնք առաջացել են Բանկի հսկողության տակ չգտնվող տեխնիկական, էլեկտրասնուցման և/կամ կապի միջոցների խախտման կամ այլ հանգամանքների հետևանքով:

5.2. Սույն պայմանագրի շրջանակներում առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.3. Պայմանագիրը կազմված է հայերեն և անգլերեն տարբերակներով, որոնք ունեն հավասար իրավական ուժ՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմին:

5.1. The Bank carries no responsibility or liability in the event of a default in the performance of any obligation due to and affected by technical failure, interruption of power supply and/or communication medium or due to other circumstances beyond the Bank control.

5.2. In the event of disputes arising out of or resulting from this Agreement, the Parties will use their best efforts to resolve such through negotiations, without recourse to arbitration or litigation. If no settlement is forthcoming, all disputes regarding this Agreement will be finally settled in accordance with the procedure as established by the legislation then in effect.

5.3. This present agreement is made in two original copies in Armenian and English equally possessing the same legal force, each party acknowledging that it has received one copy.

**6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ  
LEGAL ADDRESSES OF THE PARTIES**

**ԲԱՆԿ  
BANK**

«ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ  
“ARMBUSINESSBANK” CJSC

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան փող. 48  
Address: 48 Nalbandyan Street, Yerevan, RA  
Թ/հ N 103002101154 ՀՀ ԿԲ  
C/A N 103002101154 CBA  
«Վարդանանց» մասն.  
“Vardanants” branch  
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 6/1  
Address: 6/1 Vardanants Street, Yerevan, RA  
Մասնաճյուղի կառավարիչ՝  
Branch manager

\_\_\_\_\_  
Վ. Հարությունյան  
V. Harutunyan

**ՔԱՐՏԱՊԱՆ  
CARDHOLDER**

Անձնագիր՝  
Passport:  
Սոց. քարտ՝  
Social card:  
Հասցե՝  
Address:  
Հեռախոս՝  
Tel:  
Հաշվարկային հաշիվ՝  
Settlement account:  
Քարտի համար՝  
Card number:

\_\_\_\_\_